APRIL 2020

VERDUGO JOBS CENTER

AN AMERICA'S JOB CENTER OF CALIFORNIA

ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ստորև ներկայացված են մի շարք հարցեր, որոնք Վերդուգոյի աշխատանքի կենտրոնը ստացել է գործազրկության ապահովագրության (*անգլ. հապավումը՝ UI*) վերաբերյալ, ինչպես նաև՝ այս հարցերի վերաբերյալ տեղեկություն՝ Զբաղվածության զարգացման վարչությունից (*անգլ. հապավումը՝ EDD*): Վերդուգոյի աշխատանքի կենտրոնը իրավասու չէ պատասխանել գործազրկության ապահովագրության հայցերի վերաբերյալ հատուկ հարցերին: Լրացուցիչ հարցերի համար խնդրում ենք դիմել Զբաղվածության զարգացման վարչություն:

ՎԵՐԴՈՒԳՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԵԼ ԱՌՑԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Զանգահարեք՝ (818) 937-8000



Ի՞նչ կարող եմ անել, եթե վստահ չեմ, որ իրավասու եմ ստանալ գործազրկության նպաստ: Եթե վստահ չեք, թե արդյո՞ք իրավասու եք գործազրկության նպաստ ստանալու համար, ապա կարող եք հայց ներկայացնել: Զբաղվածության զարգացման վարչությունը (EDD-ն) կորոշի Ձեր իրավասությունը:

Արդյո՞ք գործազրկության ապահովագրությունը միայն ԱՄՆ քաղաքացիների համար է: Ո՛չ: Աշխատանքային իրավունքի փաստաթուղթ ունեցող և վարձատրություն ստացած յուրաքանչյուր ոք կարող է դիմել:

Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ դիմելիս ներկայացնում են անհրաժեշտ բոլոր տեղեկությունները: Նպաստներին դիմելու նպատակով անհրաժեշտ տեղեկություն ձեռք բերելու համար օգտվեք գործազրկության ապահովագրության ստուգման ցուցակից և Ձեր անձնական համակարգչի կամ բջջային հեռախոսի միջոցով դիմեք EDD-ի առցանց գործազրկության ապահովագրությանը: Նախքան դիմումի գործընթացը սկսելը օգտակար է նաև դիտել EDD-ի ուսուցողական տեսանյութը գործազրկության ապահովագրության մասին:

Արդյո՞ք COVID-19-ի պատճառով գործազրկության ապահովագրության դիմումի մեջ փոփոխություններ են տեղի ունեցել: Մարտի 27-ից՝ ուրբաթ օրվանից սկսած՝ գործազրկության ապահովագրությանը դիմող աշխատողներին խնդրում ենք ստուգել դիմումի բացվող ընտրացանկում առկա ընտրանքները, որտեղ նշվում է, որ կորոնավիրուսն է Ձեր

գործազրկության կամ աշխատավարձերի կրճատման պատճառը: Կարող են լինել նաև լրացուցիչ փոփոխություններ, քանի որ թարմացումներ են կատարվում:

Որքա՞ն ժամանակ է հարկավոր գործազրկության ապահովագրության վճարումները ստանալու համար: Այս պահին ներկայացված հայցերի մեծ ծավալի պատճառով մենք չենք կարող մոտավոր ժամկետներ նշել:

Ընդհանուր առմամբ, այս պահին հայցադիմումի մշակումը կարող է լրացուցիչ ժամանակ պահանջել, և EDD- ն աշխատողից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ, եթե՝

1. Ներկայացված տեղեկությունը չի համապատասխանում աշխատավարձի մասին գրանցումներին;
2. Աշխատողի ինքնությունը չի կարող հաստատվել:

Հայցադիմումի հնարավոր հետաձգման օրինակները ներառում են գործատուի կողմից աշխատողին սխալ դասակարգելու օրինակը՝ որպես ինքնուրույն կապալառու, այլ ոչ թե՝ աշխատող, կամ այն աշխատողի դեպքում, որի տվյալները կարող են տեղափոխված լինել EDD-ին զեկուցելու ընթացքում, կամ՝ թերի դիմումների դեպքում:

Ո՞ր գործատուի անվանումը պետք է լրացնեմ, եթե հանդիսանում եմ ձեռնարկություն կամ անկախ կապալառու: Սովորաբար գործատու է համարվում այն սուբյեկտը, որը վճարում է Ձեր աշխատավարձը: Դուք պետք է նշեք այն ընկերության անվանումը, որտեղից ստանում եք Ձեր վարձատրությունը: Եթե, այնուամենայնիվ, վստահ չեք, ապա EDD-ի ուսուցողական տեսանյութը գործազրկության ապահովագրության մասին կարող է օգնել:

Կարո՞ղ եմ բազմակի W2 ձևեր ներկայացնել: Այո՛:

Ի՞նչ է «Աշխատանքի բաշխման ծրագիրը»: Այս ծրագրի վերաբերյալ բոլոր մանրամասների համար այցելեք Աշխատանքի բաշխման ծրագրի կայք: Ամենակարևորը, որ պետք է իմանաք, այն է, որ գործատուն պետք է դիմի այս ծրագրին, այլ ոչ թե՝ աշխատողը:

Ի՞նչ կարող եմ անել, եթե լրացուցիչ օգնության կարիք ունեմ: Եթե դիմումը լրացնելու հարցում օգնության կարիք ունեք, կարող եք դիմել Կալիֆորնիայում Ձեր տեղական «Ամերիկայի աշխատանքի կենտրոնին» և զանգահարել EDD՝ աշխատուժի սպասարկման անձնակազմի հետ հեռախոսային հանդիպում նշանակելու համար:

Կարո՞ղ եմ արդյոք որակավորվել և՛ նահանգային գործազրկության նպաստի, և՛ դաշնային նոր գործազրկության նպաստի համար: Կախված ձեր հանգամանքներից՝ կարող եք երկուսի համար էլ որակավորվել: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք EDD-ի կորոնավիրուսի վերաբերյալ էջը:

Արդյո՞ք պետք է առանձին դիմեմ գործազրկության դաշնային նպաստների համար: EDD- ն աշխատողներին նոր ցուցումներ կտրամադրի կորոնավիրուսի վերաբերյալ իր էջում:

Գործազրկության նպաստի մասին լրացուցիչ հարցերի և պատասխանների համար կարող եք այցելել EDD- ի հաճախակի տրվող հարցերի էջը:

Verdugo Jobs Center
America's JobCenter of California